քէի։ Գտին փոխանակագիր 45,000 դահեկանի 'ի Կոստանդինուպոլիս կնքով Պատրիարքին, ապա Վարդապետքն ստորագրեալ առաքեցին զայն։ Կուսակալն մեկնեցաւ 'ի Դամասկոսէ և սեղանաւորքն ընդ նմա ըստ սովորութեան մինչեւ 'ի Միւզէրիպ, և Վարդապետքն ելին 'ի Դամասկոսէ (յ2 Հոկտեմբերի)։ Իսկ Դիոնէսիոս ախտացեալ տենդիւ 'ի Դամասկոս, և հասեալ 'ի Նաղարէթ կրկնեաց հիւանդութիւնն, և հազիւ հասեալ 'ի Ռէմլէ անկաւ 'ի մահիճս։ Լուեալ Թէոդորոսի առաքեաց զոմանս՝ և ետ տանիլ զնա յԵրուսաղէմ։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Բդեշխն Աքքէի։ Փոխանորդն Յունաց։ Յովհաննէս Պատրիարքի անկումն։ Աքսորումն Խաչատրեանին եւ Դատաւորին Երուսաղէմի։ Հանդերձապետ Աքքայի։ Նոր Դատաւոր Մուսայ Էֆէնտի։

ԲԴԵՇԽՆ Աքքէի որ Միւթեվէլլի էր տաճարին Ս. Յարութեան, իբրեւ լուաւ զոր ինչ էառ 'ի Հայոց Կուսակալն Դամասկոսի, խնդրէր և ինքն նոյնչափ դանձս։

Փոխանորդն Յունաց առաքեաց զոմանս յիւրոցն 'ի վանս Հայոց և ասէ՝ բաւական լիցի այսքան տարաձայնութիւն 'ի մէջ երկուց ազգաց՝ երթայք պատարագեցէք ըստ առաջին սովորութեան ձերոյ 'ի վերայ գերեզմանի Ս. Աստուածածնի յաւուր չորեքշաբաթի. այլ Հայք ետուն պատասխանի. եթէ թոյլ տայք առնել մեզ որպէս դուքդ առնէք, զի տեղին ընկերովի է, երթիցուք, ապա թէ ոչ՝ մնասցէ. այլ նոքա խորշեալ 'ի բաժանորդ բառէն, յառաջ բերէին նախ քան զ40 ամն. զի այնպէս հրամայեալ է ասէին՝ Արքայի։ Եւ 'ի չգիջանիլ այսմ Հայոց, առին գիր 'ի Դատաւորէն և յայլազգեաց քաղաքին վասն Բեթղեհէմի, թէ Հայք բնաւ չունին իրաւունս 'ի վերայ եկեղեցւոյն այնորիկ ոչ պատարագի եւ ոչ այլ իրաց. բայց Նախիսն եւ Միւֆթին ոչ կնքեցին զգիրն, չկամիմք ասեն լինել սուտ վկայ. նմին իրի Յոյնք ամբաստան եղեն զսոցանէ 'ի Կոստանդինուպոլիս և Նուրի Էֆէնտի, որ նրս-